

ԱՌԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

Ազգային միասնութամբ քաղաքացիական իրաւունքների ճամբով

ՉԱՐԵՅ ԱԾԵՄԵԱՆ

Ընտրութիւնները կարող են մասնատել ու տարանջատել համայնքը: Ընդհակառակը նրանք կարող են միացնել ու միաւորել այն: Քալիֆորնիայի 43-րդ ընտրատարածքի խորհրդարանական ընտրութիւնը դառնում է համայնքը միաւորող ընտրապայքար:

Յուլիս 6-ին կայացող նախնական ընտրութիւնները պարզելու են թե՞ ո՞վ է լի-նելու Գլենդէյլը ներառող 43-րդ ընտրատարածքի դեմոկրատ կուսակցութեան թեկնածուն, Նոյեմբերին կայացող Նահանգային խորհրդարանի ընտրութիւններին: Ելնելով տարիների փորձից, Դեմոկրատ կուսակցութեան թեկնածուի ընտրութեան հաւանականութիւնը այնքան է, որ Յունիս 6-ի ընտրութեան արդիւնքում շահող դեմոկրատ թեկնածուին կարելի է խորհրդարանական ընտրութեան յաղթողը համարել:

Ընտրապայքարին մասնակցող թեկնածուների ցանկը պարզուելուց յետոյ ակնկալում էր որ հայ համայնքի բոլոր խաւերը միաձայնութեամբ զօրակցեն Փոլ Գրիգորեանին: Մի երեւոյթ, որ եթէ ոչ ամբողջութեամբ այլ մասամբ կարելի է իրականացած համարել: Եթէ հաշուի չառնենք միակ հայ կազմակերպութեանը, որ չգիտես ինչու՞ դուրս գալով ազգային շրջագծից ինքն իրեն այս օրուայ կացութեան մատնեց, հայ իրականութեան մէջ միւս թեկնածուի օգտին միայն անհատական զօրակցութիւններ եղան, որոնցից մի մասը պարզուեց թէ անհատական շահերից ելնելով է եղել:

Թեմակալ առաջնորդների, յարանաւորութիւնների հայ հոգեւորականների, Քաղաքային խորհրդի հայ անդամների եւ քաղաքային իշխանութեան կրթական եւ հասարակական ոլորտներում աշխատող գրեթէ բոլոր հայ անձերի եւ հայկական կազմակերպութիւնների կոչերն ու զօրակցութեան արտայայտութիւնները ապացուցում են որ ակնկալուած միասնութիւնը առաջացել է համայնքի մէջ:

Այս միասնական կեցուածքի պատճառները քանզի էին: Հայ թեկնածուի նախընտրութիւնը թէեւ կարելու էր որ ունեցաւ Գրիգորեանի շուրջ հայ համայնքին համախմբելու ուղղութեամբ, սակայն դա միակ պատճառը չէր: Փոլ Գրիգորեանի պարագային, նրա նուաճած մակարդակը իբրեւ հասարակական, կրթական եւ քաղաքական գործիչ եւ նրա ունեցած գործունէութիւնը հայ համայնքի սահմաններից ներս նրան դարձրեց համայնքի յարմարագոյն թեկնածուն:

Բաւական է մի ակնարկ նետել Գրիգորեանին հովանաւորող անձերի եւ կազմակերպութիւնների ցանկին որպէսզի անմիջապէս հաստատենք թէ Գրիգորեանը լաւագոյն ընտրութիւնն է ոչ միայն հայութեան այլ նաեւ համայնքի եւ շրջանի բնակչութեան համար: Նոյն ցանկը նաեւ ապացուցում է թէ ի՞նչ հեղինակութիւն է վայելում հայազգի քաղաքական գործիչը ամերիկեան հասարակական շրջանակներում:

Յունիս 6-ի ընտրութիւնները յարմարագոյն անձին ընտրելուց բացի նաեւ առիթ է մի այլ քաղաքական դրսեւորման համար: Սա պատմական մի առիթ է շաջանի հայութեան համար որ ապացուցի թէ ազգային միասնութեամբ կարող է վերահաստատել իր քաղաքացիական իրաւունքներն ու քաղաքական վաստակը:

Չկորցնենք այս առիթը:

Լոս Անջելըս Թայմզը (LATimes) հովանաւորում է Փոլ Գրիգորեանին

Լոս Անջելըս Թայմզը ընտրութիւնների մասին հետեւեալ հաստատումներն է կատարել՝

«Քալիֆորնիայի խորհրդարանի նախնական ընտրութիւններին չորս կարելու շրջաններում յաղթանակելու են Դեմոկրատականները:

Քալիֆորնիայի 43-րդ ընտրաշրջանում խորհրդարանի անդամակցութեան թեկնածու՝ Փոլ Գրիգորեանը, ունի յաջողութեան առաւել գրաւականներ, փոխարինելու համար Դարիօ Ֆրոմերին: Սոյն շրջանը, որն աւանդաբար համարում էր Հանրապետականների ազդեցութեան գօտի, ներկայիս ընդգրկելով Բրոքեյնը ու Գլենդէյլը քաղաքները եւ Հիւսիսային Հոլիվուդն ու հարաւից Լոս Ֆելիզը, անհերքելի կերպով Դեմոքրատական դիմագիծ ունի այսօր:

Գրիգորեանը մեկն է այն թեկնածուներից որոնք կրթադաստիարակչական հարցերը դարձրել են իրենց առաջին օրակարգը: Փոլ Գրիգորեանը լինելով Բրոքեյնը քաղաքի համրային դպրոցների կրթական խորհրդի նախագահը, ընտրուելու պարագային շատ արագօրէն կարող է տէր կանգնել իր խոստումներին: Միւս թեկնածուն՝ Գլենդէյլի քաղաքի խորհրդի անդամ Ֆրանկ Քուինթերոն եւս նախապէս աշխատել է որոշ չափով ծանօթ է դպրոցական համակարգին, սակայն նկատի ունենալով որ խորհրդարանականներն ունեն միայն ճտարուայ ժամանակահատուած իրենց յանձնառութիւններն իրականացնելու համար, սոյն պաշտօնի համար լաւագոյն պատրաստութիւնն ունեցող թեկնածուն Փոլ Գրիգորեանն է»:



Հայութիւնը միասնաբար զօրակցում է Փոլ Գրիգորեանին

Նահանգային խորհրդարանի ընտրութիւնների սեմին հայութեան միասնական կամքի դրսեւորման մի այլ արտայայտութիւնը եղաւ Հայ Դատի Յանձնախմբի Քաղաքական Գործողութեան Մարմնի (ANC PAC) Չորեքշաբթի մայիս 30-ին կազմակերպած մամլոյ ասուլիսը:

Ասուլիսին մասնակցում էին՝ ANC PAC-ից Ստեփան Պոյաճեանը, Արք. Վաչէ Յովսէփեանը, Ստեփան Փարթամեանը, Վիգէն Խաչատրեանը, Քահանայ Վազգէն Աթմաճեանը, Բարսեղ Գարթալեանը եւ հայր Անթոնի Սարոյեանը կաթողիկէ համայնքից: Բոլոր ներկաները շեշտեցին որ Յունիս 6-ին ժողովուրդը պէտք է միասնական կամքով եւ աննախընթաց թուերով մասնակցի ընտրութիւններին եւ քուէարկի Փոլ Գրիգորեանի օգտին: Ստեփան Պոյաճեանի գնահատմամբ՝ «եթէ ոմանք խօսում են հայ ազգի բարեկամների մասին, Փոլ Գրիգորեանը Հայ ազգի զաւակն է»: Ներկաների գնահատմամբ հայութիւնը իր խտացած քուէներով կը պատասխանի այն ուժերին որոնք փորձեցին հայութեան քաղաքական ուժը պառակտել:

Հանդիպման ներկայ էին հայ մամուլի եւ հեռուստատեսութեան ներկայացուցիչներ:

Չոյգ Առաջնորդները թիկունք կանգնեցին Փոլ Գրիգորեանին



«Թիկունք կը կանգնիմ Փոլ Գրիգորեանին, որովհետեւ ան կը հասկնայ կարելութիւնը հաւատքի, ըստանիքի եւ համայնքային ծառայութեան: Քաջածանօթ եմ Փոլի աշխատանքին՝ որպէս Ուսումնական Խորհրդի նախագահ: Ան լիովին նուիրուած է մեր համայնքի նոր սերունդի կեանքը բարելաւելու տեսլականին»:

«Փոլ Գրիգորեանը յարատեւ պայքար մղած է հայ ժողովրդին արդարութիւն ապահովելու ի խնդիր: Որպէս Բրոքեյնի Ուսումնական Խորհրդի նախագահ, ինչպէս նաեւ Հայկական Ֆիլմարուեստի Հիմնարկին եւ Հայկական Ապահովագրական Իրաւունքներու Հիմնադրամի Խորհրդի միջոցաւ, ան իրագործած է հիմնական միջոցառումներ, որոնց շնորհիւ վառ պիտի պահուի Յեղասպանութեան զոհերու յիշատակը»:

Յովնան Արք. Տերտրեան Առաջնորդ Արեւմտեան Թեմի

Մուշեղ Արք. Մարտիրոսեան Առաջնորդ Արեւմտեան Թեմի

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՈՒԿ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Քալիֆորնիայի Նախնական ընտրություններում «ՕՐԱԿԱՐԳ»-ը հովանավորում է՝ ՓՈՂ ԳՐԻԳՈՐԵԱՆՆԻՆ



Յուլիս 6-ին կայանալիք Քալիֆորնիայի խորհրդարանի նախնական ընտրությունները կարելու նշանակություն ունեն ոչ միայն Գլենդեյլի այլ նաև ամբողջ ամերիկահայության համար:

Նահանգային ընտրական 43-րդ տարածքաշրջանը ներառում է Գլենդեյլ քաղաքի մեծ մասը եւ մի շարք հայաշատ այլ քաղաքներ ու թաղամասեր:

Տեղական ընտրությունների մակարդակում, ինչպիսին են քաղաքային եւ նահանգային խորհուրդների ընտրությունները, հայության համար առաւել հիմնական կարեւորություն ունի այն իրողությունը, որ ընտրուող թեկնածուները պարող ապահովել տեղում ապրող հայության համայնքային եւ քաղաքացիական շահերն ու պահանջները:

Առօրեայ կեանքում քաղաքացիները շփման մեջ են բաւականին մեծ թիւ կազմող այն կառույցների եւ հիմնարկությունների հետ, որոնք կամ ուղղակիորեն ենթակա են նահանգային կառավարության, կամ էլ ղեկավարում են նահանգային օրենսդրության սահմաններում: Օրենսդրական Գործունէութեան կողքին նահանգային խորհրդի անդամները հանրային կեանքի այլ ոլորտներում եւս իրենց դերակատարութիւնն ունեն: Այդ ոլորտներից է նահանգային ֆոնդերի յատկացման գործընթացը:

Հայութեան շահերը պաշտպանող ներկայացուցչի յաղթանակը այս ընտրություններում մի անգամ ընդմիջտ կարող է ամրակայել հայութեան դերակատարութիւնը նահանգային մակարտակում:

Ամերիկայայտեան համար հասել է ժամը, որ քաղաքական դաշտի վրայ մի անգամ եւս ինքն իրեն վերահաստատի ընտրելով արժանի, կարող, փորձառու եւ հայութեան ընդհանրական շահերով տոգորուած թեկնածուին:

«Օրակարգ» ի գնահատմամբ Փոլ Գրիգորեանը լինելով հայութեան արժանի զուակ եւ միաժամանակ յարգուած ու փորձառու քաղաքական գործիչ իր մեջ է խտացնում լաւագոյն խորհրդարանականի յատկանիշները եւ արժանի է հայութեան ամբողջական վստահութեան քուէին: Մեր գնահատմամբ Փոլ Գրիգորեանի կարողութիւններով մի խորհրդարանականի ընտրութիւնը ոչ միայն հայութեան այլ նաեւ շրջանի բոլոր բնակիչների շահին է լինելու:

«Օրակարգ» պարբերաթերթը կոչ է անում համայնքի հայութեան, որ տէր կանգնելով իրենց քաղաքացիական իրաւունքներին եւ ազգային բարձր գիտակցութեամբ, օգտագործեն այս պատմական առիթը եւ խուռներամ շարքերով մասնակցեն Յուլիս 6-ի նահանգային ընտրություններին եւ իրենց քուէները կենտրոնացնեն Փոլ Գրիգորեանի անուան շուրջ:

ԿԱՐՃ ԱԿՆԱՐԿ

Միացեալ Նահանգների ընտրական մարմինները

Միացեալ Նահանգներում կառավարութիւնը բաղկացած է երեք օղակներից՝ դաշնակցային (Federal), Նահանգային (State) եւ տեղական (Local):

Դաշնակցային մակարդակում գործադիր իշխանութիւնը ղեկավարում է Միացեալ Նահանգների նախագահը եւ իր կառավարութեան կազմը: Դատական իշխանութեան գլխաւոր մարմինը Միացեալ Նահանգների Գերագոյն Ատեանն է իր մնայուն դատաւորներով, իսկ Օրենսդիր իշխանութիւնը որ կոչւում է Կոնգրես (Congress) կազմուած է երկու բաժիններից՝ Սենատը եւ Ներկայացուցիչների Պալատը (House of Representatives): Բոլոր նահանգները ԱՄՆ Սենատում ունեն երկու սենատորներ, իսկ կոնգրեսականների կամ ներկայացուցիչների թիւը կապուած է նահանգի բնակչութեան հետ: Օրինակի համար Քալիֆորնիան, որ համեմատաբար բազմամարդ նահանգ է աւելի մեծ թուով ներկայացուցիչներ ունի կոնգրեսում քան այլ նահանգները: Ներկայումս Քալիֆորնիայի ներկայացուցիչների թիւը Կոնգրեսում 53 է: Կոնգրեսի ընտրութիւնները նահանգային մակարդակում եւս կատարում են ընտրատարածքներով: Այսպէս օրինակ Գլենդեյլի ընտրատարածքի ներկայացուցիչները ԱՄՆ կոնգրեսում ներկայումս Դայէն Ֆեյնստայնը եւ Բարբարա Բաքսերն են, իսկ ԱՄՆ Սենատում՝ Սենատոր Ադամ Շիֆն է: Սենատորները ընտրուում են 6 տարով իսկ կոնգրեսականները 2 տարով: Երկուսի պարագային էլ վերընտրուելու սահմանափակում չկայ:

Քալիֆորնիայի խորհրդարանը բաղկացած է 80 խորհրդարանականներից, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է մօտաւորապէս 420 հազար քաղաքացիների: Ներկայում Գլենդեյլի ընտրատարածքի ներկայացուցիչը նահանգային խորհրդարանում Դարիօ Ֆրոմերն է:

Իւրաքանչիւր նահանգ ունի իր ներքին նահանգային կառավարական կարգը: Քալիֆորնիայում Գործադիր իշխանութիւնը ղեկավարում է նահանգապետը (Governor) եւ Փոխ Նահանգապետը (Lieutenant Governor), որոնք երկուսն էլ ուղղակիորեն ժողովրդի միջոցով ընտրուում են 4 տարուայ ժամանակաշրջանի համար: Նահանգի օրենսդիր իշխանութիւնը եւս իր հերթին կազմուած է երկու տներից նահանգային սենատը եւ նահանգային համագումարը (State Assembly) կամ նահանգի խորհրդարանը: Քալիֆորնիա նահանգի Սենատը բաղկացած է 40 սենատորներից, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է մօտաւորապէս 850 հազար քալիֆորնիայի քաղաքացիներին: Նահանգի սենատում ընտրուելը սահմանափակուած է երկու անտաշրջաններով: Գլենդեյլի ընտրատարածքի Սենատորը նահանգային սենատոր Ջեք Սքաթն է: Նահանգային խորհրդարանի ներկայացուցիչները աւելի փոքր ընտրատարածքներից են ընտրուում ուստի թուով աւելի շատ են: Քալիֆորնիայի խորհրդարանը բաղկացած է 80 խորհրդարանականներից, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում է մօտաւորապէս 420 հազար քաղաքացիների: Ներկայում Գլենդեյլի ընտրատարածքի ներկայացուցիչը նահանգային խորհրդարանում Դարիօ Ֆրոմերն է, որ արդէն լրացրել է իր 3րդ անտաշրջանը եւ ըստ նահանգի ընտրակարգի այլեւս չի կարող վերընտրուել: Նոյն աթոռի թեկնածու է Փոլ Գրիգորեանը:

Տեղական իշխանութիւնները հենց քաղաքային իշխանութիւններն են: Գլենդեյլի պարագային Քաղաքային խորհրդի անդամները ընտրուում են 4 տարուայ ժամանակաշրջանի համար եւ վերընտրուելու սահմանափակում չկայ: Քաղաքային խորհրդը բաղկացած է 5 հոգուց եւ իւրաքանչիւր քաղխորհրդի անդամ ներկայացնում է Գլենդեյլի 200 հազար քաղաքացիներին:



ORAGARK A Glendale Armenian Periodical
PUBLISHER Oragark News & Publishing
EDITOR Zareh Adjemian
ART DIRECTION & GRAPHIC DESIGN Patrick Azadian | PADA
PHOTOGRAPHY M. Baban
«ՕՐԱԿԱՐԳ» Գլենդեյլի Պարբերաթերթ
ԽՄԲԱԳԻՐ Չարեհ Աճեմեան
ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՁԵՄՈՒՐՈՒՄ Պատրիկ Ազատեան | PADA
ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ Մ.Բաբան

P.O. Box 4214
Glendale CA 91222-0214
PHONE 818.503.2042
FAX 818.484.2034
EMAIL info@oragark.com

Ստորագրութիւն կրող նիւթերն ու յօդուածները անկայման չեն ներկայացնում խմբագրութեան տեսակետները: Ձեր առաքած յօդուածները, նամակներն ու հեռախօսները հնարաւորութեան պարագային կը տպագրուեն իսկ չտպագրուած նիւթերն ու նկարները չեն վերադարձուելու:



«Փոլ Գրիգորեանը փաստուած ղեկավար է մեր համայնքին մեջ: Իր ստացած գորակցութիւնը ուսուցիչներէն եւ քաղաքի ականաւոր ղեկավարներէն կը վկայէ, որ ան պարկեշտ նկարագիր ունեցող եւ կարող ղեկավար մըն է: Բնաւ չեմ կասկածիր, որ Փոլ Գրիգորեանը մեր համայնքը յուզող հարցերու գորաւոր եւ ազդեցիկ պաշտպանը պիտի հանդիսանայ»:

Բաֆֆի Մանուկեան
Գլենդեյլի Քաղաքային խորհուրդի անդամ

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՃԱՌԻԿ

ԿԱՐՎ ԱԿՆԱՐԿ

Նահանգային Խորհրդարանի Նախնական Ընտրությունները Primary Elections

Միացեալ Նահանգների ընտրական համակարգում «Նախնական Ընտրություններ» (Primary Elections) են կոչուում այն ընտրությունները, որտեղ որոշուում է թե՛ իւրաքանչիւր կուսակցութեան կողմից ով է մասնակցելու ընտրություններին՝ իբրեւ տուեալ կուսակցութեան պաշտօնական թեկնածու: Յունիս 6-ի Քալիֆորնիայի նախնական ընտրություններում պարզուելու է, թե ովքեր են լինելու քաղաքական կուսակցությունների թեկնածուները Նոյեմբերի Նահանգային Խորհրդարանի (State Assembly) ընտրություններում:

Քալիֆորնիայի նախնական ընտրություններում քուէարկուները քուէարկելու են այն կուսակցութեան թեկնածուին, որի օգտին գրանցուել են: Այսպէս օրինակ այն անձնաւորութիւնները, որոնք Դեմոկրատ են գրանցուել, պիտի քուէարկեն Դեմոկրատների քուէաթերթիկով, որտեղ հնարաւորութիւն է տրուում միայն դեմոկրատների թեկնածուին ընտրելու համար, իսկ Դեմոկրատական գրանցուածները քուէարկելու են հանրապետականներին յատկացուած քուէաթերթիկներով, որ յատկացուած է հանրապետական թեկնածուներին ճշտորոշելու համար: Այն քուէարկուները, որոնք անկուսակցական կամ անկախ են գրանցուել եւ մերժել են յայտարարել իրենց նախընտրած կուսակցութիւնը (Decline to State), քուէարկութեան պահին պէտք է յայտնեն թե՛ ո՞ր կուսակցութեան քուէաթերթիկն են ուզում ստանալ: Պարագան նոյնն է բացակայի քուէաթերթիկ ունեցողների համար:

Այն թեկնածուները որոնք չափում են նախնական ընտրությունները, Նոյեմբերին մասնակցում են ընդհանուր ընտրութեանը մրցելու համար միւս կուսակցությունների թեկնածուների հետ: Շատ ընտրատարածքներում նախնական ընտրություններում յաղթելը առաջին հանգրուանն է իւրաքանչիւր թեկնածուի համար, սակայն որոշ ընտրատարածքներում դա հիմնական հանգրուանն է համարուում: Այդ կարգավիճակի լաւագոյն օրինակը հենց մեր Նահանգային Խորհրդարանի 43-րդ ընտրատարածքն է որը ներառում է նաեւ Գլենդէյլ քաղաքի խոշոր մասը: 43-րդ ընտրատարածքի նստարանը խորհրդարանում սովորաբար Դեմոկրատներն են զբաղեցնում: Այս ընտրատարածքից թէւ Դեմոկրատականները եւս թեկնածու են ներկայացնում, սակայն որոշ հանրապետականներ խուսափում են սոյն շրջանի թեկնածու դառնալ, քանի որ աւանդաբար այս շրջանի քուէարկողների մեծամասնութիւնը Դեմոկրատ են գրանցուում կամ անկախ քուէարկողներ են որ Դեմոկրատների օգտին են քուէարկում: Դեմոկրատները երբ որեւէ թեկնածու չափում է Դեմոկրատների նախնական ընտրութիւնը, մեծ հաւանականութեամբ նոյն թեկնածուն չափելու է ընդհանուր ընտրութեան վերջնական արդիւնքը:

Այս շրջանին Նահանգային Խորհրդարանի 43-րդ ընտրատարածքի դեմոկրատ թեկնածուներն են՝ Փոլ Գրիգորեանը եւ Ֆրենք Քուինթրոն: Թէեւ այս երկուսի միջից Յունիս 6-ի ընտրություններում չափողը Նոյեմբերին կայացող խորհրդարանական ընտրություններում մրցելու է Դեմոկրատականների եւ այլ կուսակցությունների թեկնածուների հետ, սակայն ելնելով վերի հաստատումներից կարելի է եզրակացնել որ Նոյեմբերի ընտրութեան չափողը հիմնականում ճշորոշուում է Յունիս 6-ին, երբ յստակօրէն կարելի է ասել թե՛ ո՞վ է դառնալու մեր տարածաշրջանի խորհրդարանականը՝ Քուինթրոն թե՛ Փոլ Գրիգորեանը:

ՓՈԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՄՏՔԵՐԸ

«Այսօր 43-րդ ընտրաշրջանում ապրում է Դեմոկրատների գոյութեան ամենամեծ հայկական համայնքը: Մեզ համար կենսական է, որ Սաքրամենթոյում մենք ունենանք մի խորհրդարանի ներկայացուցիչ, որը փորձը ունի մեզ յուզող հարցերով զբաղուելու, գիտակցում է մեր մտահոգութիւններին ու պահանջներին եւ պատրաստ է պայքարել այս շրջանի ժողովրդի կարիքները հոգալու ուղղութեամբ»:

«Ամեն մի համայնք ունի իրաւունք ունենալու իր արդար ներկայութիւնն ու մասնակցութիւնը պետութեան մէջ: Ամեն մի ապրող ու աճող համայնքի համար կենսական է ունենալ մի խօսնակ, մի ներկայացուցիչ, որը լաւատեղեակ է համայնքի պետքերին ու մտահոգութիւններին»:



«Ես միշտ պաշտպանելու եմ իմ համայնքի շահերը ու միւսն էլ վերջ պայքարելու եմ յանուն արդարութեան լիակատար իրականացմանը, որպէսզի Դեմոկրատները ճանաչուին, ծանօթացուին ու դասաւանդուին թե՛ հասարակութեանը եւ թե՛ դպրոցներում: Պայքարելու եմ որպէսզի հայ նոր սերնդին, տարեցներին եւ ընդհանրապէս համայնքին ծառայող մեր կազմակերպութիւնները ստանան իրենց արդար ու հասանելի օժանդակութեան բաժինը Նահանգային աղբիւրներից: Իմ գրասենեակում պիտի աշխատեն հայերէն լեզուին տիրապետող պաշտօնեաներ եւ մենք միշտ պատրաստ պիտի լինենք օգնութիւն տրամադրելու մեզ դիմողներին եւ լուծելու նրանց դժուարութիւնները»:

Քալիֆորնիայի Փոխ-Նահանգապետի ընտրություններում

«ՕՐԱԿԱՐԳ»-ը հովանաւորում է՝ Սենատոր Ջաքի Սփիրին

Նահանգային սենատոր Ջաքի Սփիրը գնահատուած է ամերիկահայ գաղութի կողմից, նահանգի մէջ ամերիկահայերին յուզող հարցերի եւ օրինագիծերի նկատմամբ իր ցուցաբերած ուժեղ գորակցութեան համար: Իբրեւ խորհրդարանական իր պաշտօնավարութեան սկզբից, սենատոր Սփիրը հեղինակել է ամերիկահայութեան շահերը հետապնդող բազմաթիւ օրէնքներ եւ աննախընթաց մրցանիշ է արձանագրել, աշխատելով օրէնքի ուժ ապահովելու աւելի քան 300 օրինագիծերի համար: Իր նորագոյն իրազորումներից մէկը եղաւ այն, որ հեղինակեց 2005-ի Դեմոկրատական Յեղասպանութեան բանաձեւը Քալիֆորնիայի մէջ, եւ ամերիկահայ իր պաշտօնակիցին սենատոր Ջաք Փուլիկեանի (Դեմոկրատական-Ֆրեզնոյից) հետ հեղինակեց Սենատի Բանաձեւ թիւ 424ը (SB 424), որ օրէնքի ուժ ստացաւ Նահանգապետ Առնոլդ Շուարցենբերգի կողմից, որի հիման վրայ Ապրիլ 24-ը մնայուն կերպով դարձաւ Դեմոկրատական Յեղասպանութեան Ոգեկոչման Օր Քալիֆորնիայի մէջ: Սենատոր Սփիրը նահանգի ընտրեալ բարձրագոյն պաշտօնատարներից է, որ հայկական ծագում ունի, եւ այժմ նահանգային օրէնսդրութեան մէջ ծառայող միակ ամերիկահայ կինն է:



որի նպատակն էր վկայութիւններ առնել այն անհատներից, որոնք գերի բռնուած էին աղանդի առաջնորդ վեր. Ջիմ Ջոնզի կողմից: Նոյեմբեր 18, 1978-ին, երկու օր հետախուզութիւնից յետոյ, զինուորական յարձակման զոհ գնացին կոնկրետական Ռայլընը եւ չորս ուրիշներ, նրա ճամբորդական խումբից: Սենատոր Սփիրը, որ այն ժամանակ 28 տարեկան էր, վիրաւորուեց հինգ փամփուշտներով եւ 22 ժամ մնաց անտառի ամայութեան մէջ, օգնութիւն սպասելով: Սենատոր Սփիրը հաստատել է, թե՛ «Չունգթաւունի ողբերգութիւնը ամենօրեայ մի յուշարար է, թե՛ ոչ ոքի ապագան ապահովուած չէ...: Այս ամբողջովին յեղաշրջեց իմ փիլիսոփայութիւնս եւ եռանդս գործի ու կենքի նկատմամբ»:

Սփիրը դարձաւ Սան Մաթեօ Քաունթիի Վերահսկիչների Խորհուրդին մէջ ծառայող ամենից երիտասարդ անդամը, երբ շահեց իր առաջին ընտրութիւնը, պարտութեան մատնելով 20 տարուայ փորձ ունեցող վերընտրելի թեկնածուին: Սփիրը Քալիֆորնիայի Նահանգային Խորհրդարանում ծառայեց 1986-ից մինչեւ 1996, նախքան Նահանգային սենատի անդամ ընտրուելը, ուր ամբողջացրեց իր երկրորդ շրջանը եւ վերջերս մշակուեց նախագահի տեղակալ: Անցեալ տարի, Սփիրը այցելեց Արեւմտեան Ամերիկայի Դեմոկրատական Յանձնախումբի գրասենեակը եւ խօսեց 2006-ին, Քալիֆորնիայի նահանգի փոխ նահանգապետի թեկնածու դառնալու իր մտադրութեան մասին: Մինչ այժմ նա ապահովել է մի շարք հիմնական ընտրողների գորակցութիւնը:

Ջաքի Սփիրը ընտրուելու պարագային, Նահանգապետ ճորձ Տօքսնթեանից յետոյ ծերակուտական Սփիրը դառնալու է նահանգային մաշտապով ծառայող երկրորդ ամերիկահայը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ

ՔՈՒՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԹԷ...

...ձեզանից անձնագիր պահանջեն

Քուեարկելու ընթացքին եթէ ձեզանից անձնագիր պահանջեն եւ դուք ունէք ձեր մօտ, ցոյց տուէք: Եթէ ձեր անձնագիրը ձեր մօտ չէ, դուք կարող էք քուեարկել «ժամանակաւոր քուեաթերթիկով»:

...հերթի մէջ եք

Եթէ քուեակենտրոնը փակուելու պահին դուք հերթի մէջ էք գտնուում, կարող էք քուեարկել:

...պարտաւոր եք բացակայել աշխատանքից

Եթէ քուեարկելու համար պարտաւոր եք բացակայել աշխատանքից, ձեր իրաւունքն է որ մինչեւ 2 ժամ բացակայէք քուեարկելու համար առանց վճարման կրճատումի, պայմանով որ ձեր գործատիրոջ նախապէս, նախընտրաբար ընտրութեան նախորդող Ուրբաթ օրը տեղեակ պահած լինէք:

...կարդալու դժուարութիւն ունէք

Եթէ օգնութեան կարիք ունէք քուեարկելու համար.- Եթէ կարդալու դժուարութիւն ունէք, կամ որեւէ այլ ֆիզիքական դժուարութիւն ունէք, կարող էք դիմել օգնութեան:

...ֆիզիքական անկարողութիւն ունէք

Եթէ քուեակենտրոն մտնելու դժուարութիւն ունէք ֆիզիքական որեւէ անկարողութեան պատճառով, Քուեակենտրոնի աշխատողներից մէկը կարող է դուրս գալ, որպէսզի դրսում քուեարկէք:

...երեխաները ձեր հետ են

Եթէ պէտք է ձեր երեխաները ձեր հետ տանք քուեակենտրոն, կարող էք 18 տարեկանից փոքր երեխաները ձեր հետ տանել քուեասեղանի մօտ:

...սխալ արձանագրէք քուեաթերթիկի վրայ

Եթէ սխալ արձանագրէք քուեաթերթիկի վրայ, իրաւունք ունէք երկու անգամ նոր քուեաթերթիկ ստանալու:

...ձեր Absentee Ballot-ը ընտրութեան օրը ձեր մօտ է

Կարող էք այն թողնել քաղաքի որեւէ քուեակենտրոնում: Կարող էք նաեւ այն ուղարկել որեւէ բարեկամի կամ ընտանեկան անդամի հետ, պայմանով որ Դուք ստորագրէք ծրարը եւ արձանագրէք այն անհատի անունը, որ ձեր փոխարէն այն յանձնելու է: Եթէ absentee ballot-ը կորցրել էք կամ եթէ absentee ballot-ը չէք ստացել, կարող էք ընտրութեան օրը քուեարկել ժամանակաւոր քուեաթերթիկով:

...երբեւէ ձեր քուեարկելու իրաւունքը հարցական դառնայ

դուք կարող էք քուեարկել «ժամանակաւոր քուեաթերթիկով»: Այս ձեւով կարող էք քուեարկել քաղաքի իւրաքանչիւր քուեակենտրոնում: Այս քուեաթերթիկով պէտք է անպայման արձանագրէք ձեր հասցեն եւ ստորագրէք յանձնելուց առաջ:

- ժամանակաւոր քուեաթերթիկով պէտք է քուեարկել, եթէ
 - Ձեզնից անձնագիրը պահանջեն եւ չունենաք ձեր մօտ:
 - Պաշտօնեաները չյաջողեն ստուգել ձեր գրանցումը:
- Արձանագրութիւնները ցոյց տան, որ դուք տեղափոխուել էք:
 - Քուեակենտրոնը, որ այցելել էք ձեր տան շրջանից հեռու է:
 - Ձէք ստացել կամ չէք վերադարձրել ձեր Absentee Ballot-ը:

ՔՈՒՆԱՐԿԵԼԸ ՁԵՐ ԻՐԱԿՈՒՆՔՆ Է: ՔՈՒՆԱԿԵՆՏՐՈՆԻՅ ՇԵՌԱՅԷՔ ՄԻԱՅՆ ՔՈՒՆԱՐԿԵԼՈՒՅ ՅԵՏՈՅ:

Փոլ Գրիգորեանին հովանաւորում են՝

Փոլ Գրիգորեանին իր ընտրապայքարում զօրակցել են բազմաթիւ հասարակական – քաղաքական գործիչներ եւ կազմակերպութիւններ: Նրանց շարքին են՝

Թեմակալ Առաջնորդներ Յովնան Արք. Տերտերեան Մուշեղ Արք.Մարտիրոսեան

- Կոնգրեսականներ՝ Ֆրէնք Փալոս, Լիսդա Սանչէս, Լորէթթա Սանչէս, Բրեդ Շերմըն
- Նահանգային Սենատորներ՝ Զօ Դանն, Ջէքի Սփիր
- Նահանգային Խորհրդարանի անդամներ՝ Փէթի Բըրկ, Ջէքի Գոլթըրկ, Եոհան Բլէս, Փոլ Բորեց, Մարք Լէսօ, Լոյդ Լէվին, Մարոլ Լիու, Ֆրէն Փէլի

Գլենդէյլ Քաղաքից

- Քաղաքապետ՝ Դէյվ Ուիլլըր
- Քաղաքային Խորհրդի անդամներ՝ Բաֆֆի Սանուկեան, Բաբ Եուսեֆեան, Արա Նաշարեան
- Գլենդէյլի Կրթական Խորհրդի նախագահ եւ կազմի անդամ՝ Մէրի Բոզըր, Ջոյլին Վազըր

Գլենդէյլի Համայնքային Քուլեջի Հոգաբարձուների Խորհրդի անդամներ՝ Արմինէ Յակոբեան, Վահէ Փիրումեան

Գլենդէյլի նախկին քաղաքապետ՝ Ճինճըր Բրեմբըրկ

Բըրբենք Քաղաքից

- Քաղաքապետ եւ Քաղաքային Խորհրդի անդամներ՝ Քաղաքապետ Թատ Բեմպըլ եւ Քաղաքային Խորհրդի անդամներ՝ Ջէֆ Վանդեր Պորթ, Դէյվ Կոլոնսքի
- Քաղաքի Գանձապահ՝ Դոնա Անդերսըն
- Կրթական Խորհրդի անդամներ՝ Լէրի Էփըլթոմ, Դէյվ Բեմք, Դէքի Կուկոյա
- Նախկին Քաղաքապետներ՝ Լու Հաուըրդ, Դէյվիդ Լորել, Լէրի Սթեմբըր, Վինս Սթեֆանօ

- Կրթական Համակարգի Գործիչներ
- Գլենդէյլի Համայնքային Գոլէջի նախկին Նախագահ՝ Դոկտ. Գրեգորի Բովման, Գլենդէյլի Համայնքային Գոլէջի նախկին Նախագահ՝ Դոկտ. Ջան Դաւիթ, Գլենդէյլի հանրային դպրոցների համակարգի տեսուչ՝ Դոկտ. Մայքըլ Եսթալանթ, Գլենդէյլի Համայնքային Քուլէջի CSEA-ի նախագահ՝ Նիդալ Բորայիսի, Լոս Անջելըս Սիթի Քուլէջի նախագահ՝ Դոկտ. Սթիւ Մարադեան, Լոս Անջելըս Համայնքային Գոլէջի Ջորջիա Մըրսըր

- Ոստիկանական Ուժեր
- Burbank Police Officers Association
- Los Angeles County Sheriff Lee Baca
- Chief Steven Wagg, Glendale Community College Police Department

*Individual Titles for identification purposes only.

Կազմակերպութիւններ

- Armenian National Committee of America (Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ) PAC
- Animal Legislative Action Network California Association of Realtors
- California Association of Professional Employees
- California Pharmacists Association
- California NOW (National Organization for Women) PAC
- California Optometric Association LSCOA PAC
- California Teachers Association
- Engineering Contractors Assoc. PAC
- Glendale Association of Realtors
- Humane Farming Association
- Local Societies of the California Optometric Association PAC
- Los Angeles Times
- Burbank Teachers Association
- Glendale Teachers Association

- Amalgamated Transit Union California Conference Board and ATU Local 1227 California Association of Professional Employees Communication Workers of America, --Southern California Council CWA Locals 59053 (NABET), 9000, 9503, 9505, 9575 and 9586
- Operating Engineers, Local 12
- Southwest Regional Council of Carpenters Transport Workers Union of America

Դեմոկրատ Կուսակցութեան Կազմակերպութիւններ

- Democratic Party of the San Fernando Valley Action
- Democrats of the San Fernando Valley
- Democratic Women of the San Fernando Valley
- Democrats for Neighborhood Action of Los Feliz/Silver Lake San Fernando Valley Young Democrats Sherman Oaks
- Democratic Club Stonewall Democratic Club LABOR